



DIocese OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2357
Մայիս 9, 1996

Արժանաշնորհ
Տ. Վրթանէս Ա. Զհնյ. Գալայնեան
Հովիւ Ա. Աստուածածին Եկեղեցոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ուաշինկթըն Տի. Սի.

Սիրելի Տէր Վրթանէս,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Ապրիլ 24, 1996 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 25 եւ Ապրիլ 14, 1996-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի չորս անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Հարրի Տէրտերեան
Անահիտ Այրանճեան
Բաֆֆի Պարտիզպանեան
Սիւզըն Օհանեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանհի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐԶ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ